

Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում («ՆՁԱԿ» ՊՈԱԿ) կազմակերպվում է ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանում առկա տեղեկատվական նյութերի «Ճշգրիտ չափումները որպես որակի և անվտանգության հիմք» թեմատիկ ցուցահանդես՝ առցանց (on-line) և գրադարանում:

Ցուցահանդեսը նվիրված է Չափագիտության համաշխարհային օրվան:



## *Մայիսի 20-ը Չափագիտության համաշխարհային օրն է*

2016 թ. կանցկացվի «Չափումներ դինամիկ աշխարհում» կարգախոսի ներքո

World Metrology Day - 20 May

<http://www.worldmetrologyday.org/>

[http://www.worldmetrologyday.org/press\\_release.html](http://www.worldmetrologyday.org/press_release.html)

<http://www.vniim.ru/day-metrology.html>

<http://rostcsm.ru/content/view/115/94/>

1999 թվականից սկսած մայիսի 20-ը նշվում է որպես չափագիտության համաշխարհային օր (World Metrology Day): Այդ օրն ընտրվել է ի նշանավորումն 1875թ. մայիսի 20-ին Փարիզում ստորագրված «Չափագրական կոնվենցիայի» (Metre Convention), որի հիման վրա հետագայում ստեղծվեց Չափի և կշռի միջազգային կազմակերպությունը:

Չափագիտական կոնվենցիայի համաձայն սահմանվել է չափերի մետրական համակարգը, իսկ այնուհետև՝ Միավորների միջազգային համակարգը, որի հիման վրա էլ ստեղծվել և գործում է չափումների միջազգային համակարգը: Չափագիտական կոնվենցիայի սկզբնական խնդիրը՝ ամբողջ աշխարհում չափումների միասնության ապահովումը, տարեցտարի ավելի ու ավելի հրատապ է դառնում:

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն ՀՀ-ում ճանաչվել է Չափագիտության ազգային մարմին՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի թիվ 882-Ն որոշման:

**[ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանում արվա «Стандарты и качество» ամսագրի 2015թ. և 2016թ. համարների հոդվածների համառոտագրերը](#)**

**[«Ճշգրիտ չափումները որպես որակի և անվտանգության հիմք» թեմայով գրականության մատենագիտական ցանկ](#)**

**[Այլ տեղեկատվական աղբյուրներ](#)**

Ներկայացված ամսագրերի հոդվածների լիատեքստ տարբերակները կարող եք պատվիրել [փաստաթղթերի էլեկտրոնային արարման](#) ծառայության էլեկտրոնային փոստով՝ [edd@innovcentre.am](mailto:edd@innovcentre.am), հեռախոս՝ (011)235620 կամ այցելել [ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանում](#) գործող թեմատիկ ցուցահանդես, հասցե՝ Երևան, Կոմիտասի պող., 49/3, 5-րդ հարկ, 504 սենյակ, հեռախոս՝ (011) 236754:

Այցելելով [ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարան](#) կամ կատարելով թեմատիկ որոնում [գրադարանի էլեկտրոնային գրացուցակում](#), ինչպես նաև ծանոթանալով [գրադարանի բաժանորդագրության ցանկին](#) և [լիատեքստ տվյալների բազաներին](#) կարող եք օգտվել ձեզ հետաքրքրող գրականությունից:

«ՆՁԱԿ» ՊՈԱԿ

<http://www.innovcentre.am/hy/>, <http://facebook.com/InnovCentre>

Հասարակայնության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժին